ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

COVID-19 համավարակի ընթացքում ընդունված մեղմման միջոցառումները

2020թ. սեպտեմբեր

Առաջնահերթություն է տրվել գրասենյակային աշխատանքին, մասնավորապես՝

- Հայաստանին, Բելառուսին, Վրաստանին, Մոլդովայի Հանրապետությանը և Ուկրաինային տրամադրվել **էիրավական խորհրդատվություն** դատական և քրեական իրավունքի ոլորտում:
- 4 կարծիք և 1 Amicus curiae է **ընդունվել գրավոր ընթացակարգով** Վենետիկի հանձնաժողովի կողմից:
- Հայաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Ուկրաինայում իրականացվել են խտրականության վերաբերյալ **տվյալների հավաքագրման հետազոտություններ**

Միջոցառումներն իրականացվել են առցանց, մասնավորապես՝

- **Իրավական ոլորտի մասնագետների համար մարդու իրավունքների կրթության(HELP) ծրագրի 5 դասընթացի** մշակում և մեկնարկ տարածաշրջանում COVID-19-ի ընթացքում: 2020թվականի մարտի կեսից գրանցվել է օգտվողների **22% աճ:**
- Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Ուկրաինայում**Իրավական ոլորտի 60 մասնագետի մենթորային ծրագրի առցանց իրականացում**:
- **Եվրոպական չափանիշների վերաբերյալ առցանց վերապատրաստման արդյունքում** 187 բելառուս ուսանողների իրազեկության բարձրացում քաղաքացիական արդարադատության ոլորտում:
- 2 ինֆոգրաֆիկայի պատրաստում վճարման էլեկտրոնային նոր հարթակի և **կարանտինի ընթացքում Հայաստանի հարկադիր կատարման ծառայության ձեռնարկած քայլերի** մասին:

Գործողությունների համապատասխանեցում COVID-19-ով պայմանավորված իրավիճակի կարիքներին

- Դատական գործերի կառավարման համակարգը համապատասխանեցվել է, որպեսզի Վրաստանի քաղաքացիները հնարավորություն ունենան **առցանց բողոքներ ներկայացնել** Սահմանադրական դատարան՝ ապահովելով արդարադատության հասանելիություն՝ COVID-19-ով պայմանավորված հանգամանքներում:
- Ադրբեջանի և Մոլդովայի Հանրապետության իշխանությունները ավելի լավատեղյակ են, թե ինչ միջոցառումներ պետք է ձեռնարկել՝**բարելավելու համավարակի ընթացքում դատական համակարգի արդյունավետությունը և գործառնությունը:**

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

Արևելյան գործընկերության երկրներում ԵՄ կողմից իրականացված մեղմման միջոցառումների օրինակներ՝ ի հավելումն ԳԼԿ ծրագրի

- Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի և Մոլդովայի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներին **բժշկական նյութերի և անհատական պաշտպանության միջոցների** տրամադրում:
- COVID-19-ի համատեքստում **ազատազրկման վայրում առողջապահության կառավարման** և կազմակերպման վերաբերյալ ձեռնարկի և **ազատությունից զրկված անձանց բուժման** մասին բրոշյուրի մշակում և ուկրաիներեն թարգմանություն:
- ՄԻԵԴ-ում ՀՀ Կառավարության ներկայացուցչի գրասենյակի աշխատակազմի իրազեկության բարձրացում **ազատության և անվտանգության իրավունքների, արդար դատաքննության, անձնական կյանքի և արտակարգ իրավիճակներում դրանց սահմանափակումների մասին**:
- **Ճգնաժամի պայմաններում** ավելի պատասխանատու լրագրության և **լրատվության** խթանում Ուկրաինայում և Վրաստանում:
- **Սանիտարահիգիենիկ փաթեթների** տրամադրում Ուկրաինայի գնչու բնակչությանը:
- Վրաստանում և Ուկրաինայում **COVID-19-ի համավարակի և սանիտարահիգիենիկ միջոցների** մասին տեղեկությունների թարգմանություն փոքրամասնությունների լեզվով:
- COVID-19-ի համավարակի համատեքստում **տվյալների պաշտպանության իրավունքի** և **թվային տվյալներին հետևելու** վերաբերյալ Եվրոպայի խորհրդի հայտարարությունները թարգմանվել են ուկրաիներեն և ներկայացվել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ: Ներկայացվել է առաջարկություն Ուկրաինայում COVID-19-ի տարածումը կանխարգելելու նպատակով թողարկված բջջային հավելվածի առնչությամբ տվյալների պաշտպանության չափորոշիչների պահպանման վերաբերյալ:

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

- Վրաստանի փաստաբանների միությանը **փոքր դրամաշնորհի** տրամադրում՝COVID-19-ի ճգնաժամի պատճառով տնտեսական դժվարություններ ունեցող սոցիալապես անապահով ընտանիքներին անվճար ծառայություններ մատուցելու նպատակով:
- **«Մարդու իրավունքների զրույցները COVID-19-ի ժամանակներում»** երեք հանդիպման կազմակերպում Վրաստանում, ներառյալ կանանց նկատմամբ բռնությանը նվիրված քննարկման՝ 96 000 օգտատեր ընդգրկող առցանց լսարանով:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝
https://pjp-eu.coe.int/en/web/pgg2/home

LIVE **Կենդանի բանախոսային քննարկում ԳԼԿ «Արձագանք COVID-19-ին և սերտած դասեր Արևելյան գործընկերության տարածաշրջանում»՝ 2020թ. հոկտեմբերի 7-ին, ժամը10:30-12:00 կենտրոնական եվրոպական ժամանակով**

Կոնտակտային տվյալներ՝Ogdp_pgg@coe.int
@partnershipgovernance
@CoeEapPCF

Funded by the European Union and the Council of Europe
EUROPEAN UNION
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE
Implemented by the Council of Europe